թեանն ետես ի հին այսմաւուրս լատինաց կամ ունաց զայլս, և մնացին սոքա միայն զոր դեռ ևս ոչ է տեսեալ, այսինք թէոտոթայ պոռնկի մակեդոնեայ փիլիպպի քաղաքէ։ Եւ ստրատոնիկայ կուսի և սելևկոսի փեսայի նորա չիսցիկո քաղաքէ ի սփոնթէ գաւառի որ է ի յասիայ։ Եւ կարելի էր որ Պօլլանտի գրեանց չինողքն որ յիշեցեալ գրեանքս առ նոսա հասեալ կայ և ըստ աւուրց ամսոց կարգաւորին զվարս սրբոց մարտիրոսաց և խոստովանողաց, գտանել կարիցեն զանուանս համայնից ի բազմաթիւ այսմաւուրս, որս առ նոսա գտանին զանազան հեղինակաց և լեզուաց. և կամ թէ առ ձեզ գուցէ ևս գտանիցի ի հնագոյն ձեռագիր գրեանս զսոցին վարս և զայլոցն։...

Նուաստ ծառայ
Յովսէփ եպսկ. [Ստեփանեան]

1758 սեպ. 16
[Հռովմ]

ՄԺԶ.

Ամիթ քաղաքին (Տիգրանակերտ) մէջ պատահած ահռելի սովի մը համառօտ տեղեկութիւնն է որ կը նկարագրուին հետագայ երկու նամակներուն մէջ։

Ա.

Դերապատիւ տեառն Աբրահամ հայր Ստեփանոս Աստուածաբանութեան վարդապետի յոյժ բազում սիրով և յարգութեամբ ողջոյն և սէր մատուցանեմք

... զարձեալ յայտ լիցի ձեզ որ դեկտեմբերի 17 աւուրն եկեալ հասին ի հռօմ մեր միքայէլ հոգեւոր տէրն և իզմիրցի յովանէս եպիսկոպոսն և Լիբանանեան Հ. Ղուկասն, և ընդ նոսա այլ երկու դպիրք մինն կրօնաւոր ուխտեալ, եմուտ ի դպրատունն սրբոյ Յողովոյն և միւսն առ ի սպասաւորել ի հիւրանոցի մերոյ. և բազում իրս պատմեցին սակս անցեալ սովու և սղութեանն որ եղև յարեւելս, ի մէջ որոց յամիթ քաղաքի գրէ թէ 450 տղայ մանուկ անյայտ եղեալք և կորեալք. ուստի ի բողոքել ծնողաց նոցա առ դատաւորս, հրաման ելեալ ի կասկածելի տեղիսն որոնել, որ և իսկ ի միում տան տաճկի 13 զգաթ մանկանց տեսեալ. զեօթն անձն ի տանէ այնմիկ կալեալ ի մէջ հրապարակին սրով զգլուխս նոցա հատեալ։ Եւ այսպէս ի բազում տեղիս զմիս մարդկանց ի սովու կերեալք, թող թէ շանց և կատուից և գրաստուց ոչ միայն կենդանեացն, այլ ևս ի սովու անկեալ մեռելոցն։ Եւ այլ անտանելի իրս, զորս գրելն ոչ է պատեհ. և բաց այս մանէ հոգևոր սով և հալածանք ի տեղիս տեղիս. և անթիւ բազմութիւնք մեռելոց, ոմանք ի սովու և ոմանք ջերմութեամբ։... Հոգեւոր տէրն մեր և Վրդանէս և յովանէս եպիսկոպոսքն և այլք ամենայն բարեկամք յոյժ բազում սիրով ողջոյն մատուցանեն ձեզ և զսուրբ տօնն Ննդեան և զնոր տարի ձեզ և հասարակութեան ձերում շնորհաւորեն։...

Նուաստ ծառայ
Յովսէփ եպիսկոպոս [Ստեփանեան]

Յամի տեառն 1758
Դեկտ. 23
[Հռովմ]